ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **Անունը, ազգանունը՝**

   Վաչե Տերտերյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

   ՀՀ ՏԿԵ նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Վրաստան (Ախալցխա), 2022 թվականի հոկտեմբերի 17-ից 18-ը

4. **Հրավիրող կողմը.**

   Եվրոպայի խորհրդի երևանյան գրասենյակ

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

   Մասնակցություն «Անդրսահմանային համագործակցության առաջնորդության ակադեմիայի» երկրորդ փուլի բացման արարողությանը:

6. **Քննարկված թեմաները.**

   - ✓ անդրսահմանային համագործակցությանն ուղղված նոր նախաձեռնությունների մշակում,
   - ✓ միջսահմանային համագործակցության ընթացակարգերը և օրենսդրական դաշտի հնարավորություններն ու բացթողումները,
   - ✓ հիմնական շահագրգիռ կողմերի ներգրավումը անդրսահմանային համագործակցության գործընթացներում,
   - ✓ հանրային ծառայությունների արդյունավետությունը բարելավելու նպատակով արդյունավետ թիմային աշխատանքի խթանում,
   - ✓ կազմակերպության մշակույթի բնույթը և նրա դերը կազմակերպության գործունեության մեջ,
   - ✓ սցենարների պլանավորման կիրառում անդրսահմանային համագործակցության գործընթացներում,
   - ✓ անդրսահմանային համագործակցության գործընթացների ռազմավարական կառավարում:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

   Եվրոպայի խորհրդի անդրսահմանային համագործակցության Առաջնորդության ակադեմիայի դասընթացի երկրորդ փուլի բացման արարողությանը ներկայացված ելույթով կարևորվել է դասընթացը, որը

հնարավորություն է տալիս հիմքեր ստեղծել ավելի խորը համագործակցության համար, ակտիվացնել շփումները Հայաստանի և Վրաստանի սահմանամերձ համայնքների տեղական իշխանությունների ներկայացուցիչների միջև, ապահովել փորձի փոխանակում՝ փոխադարձ օգնության մեխանիզմների մշակման, համայնքներում առկա խնդիրների վեր հանման ուղղությամբ:

Հանդիպում է տեղի ունեցել Վրաստանի տարածաշրջանային զարգացման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Մզիա Գիորգոբիանիի, Սամցխե-Ջավախքի մարզի նահանգապետ Բեսիկ Ամիրանաշվիլի և Ախալցխայի քաղաքապետ Իրակլի Լազարաշվիլիի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են անդրսահմանային համագործակցության, ինչպես նաև տարածքային կառավարման ոլորտում ֆինանսավորման և ջրային կառավարման հետ կապված մի շարք հարցեր:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Հանդիպման ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել Սամցխե-Ջավախքի նահանգապետի պատվիրակությանը հրավիրել Հայաստանի Հանրապետություն, մասնավորապես Շիրակի մարզ, և մի շարք հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում կատարել փորձի փոխանակում:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Ինտերակտիվ քննարկումների միջոցով դասընթացի ընթացքում վեր են հանվել համայնքներում առկա խնդիրները և որոշում է կայացվել շարունակել աշխատանքները ծրագրի շրջանակներում:

Առաջարկվել է Վրաստանի Սամցխե-Ջավախք նահանգի և ՀՀ Շիրակի մարզի միջև ստորագրել համագործակցության փաստաթուղթ:

10. **Ստորագրությունը, ամսաթիվը**

20.10.2022 թ.